

14.03.25 - 14.03.25

14:30

Անցանց

Գրանցումը փակ է



[Պահպանել Google օրացույցում](#)

ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարան, 503 ընթերցասրահ

Ս.թ. մարտի 14-ին՝ ժամը 14:30-16:00-ն, ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանի 503 ընթերցասրահում տեղի կունենա «

Դասագրքաստեղծման մարտահրավերներն ու լուծումները. հանդիպում դասագրքերի հեղինակների հետ» խորագրով հանդիպում-քննարկում:

Հանդիպման բանախոսներն են.

- **Սմբատ Գոգյան** («Մաթեմատիկայի» 5-8-րդ դասարանների դասագրքերի համահեղինակ, «Քառակուսի» հիմնադրամի տնօրեն)
- **Սոկրատ Մկրտչյան** («Մաթեմատիկայի» 1-4-րդ դասարանների դասագրքերի հեղինակ)
- **Արաքս Մանուչարյան** («Հասարակագիտության» 7-րդ և 10-րդ դասարանների դասագրքերի համահեղինակ, դպրոցում ֆինանսական գրագիտության առարկայի ներդրման ջատագով)

Քննարկումը ծավալվելու է հետևյալ հարցերի շուրջ.

- Որո՞նք են դասագրքերի ստեղծման և գնահատման տարբեր փուլերին բնորոշ դժվարություններն ու դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:
- Սովորողների նախասիրությունները, սոցիալական մեդիան և նոր տեխնոլոգիաներն ինչպիսի՞ ազդեցություն ունեն մաթեմատիկայի ուսուցման, դասագրքերի բովանդակության վրա:
- Ինչպիսի՞ն են մաթեմատիկայի դասավանդման հեռանկարները՝ հաշվի առնելով արհեստական բանականության և մեքենայական ուսուցման

զարգացումները:

- Որոշք են նոր դասագրքերում կիրառված նորարարական մոտեցումները, գաղափարներն ու անսովոր լուծումները:
- Մաթեմատիկա և ֆիզիկական գրագիտություն, մաթեմատիկա և 21-րդ դարի հմտություններ:
- Դասագրքերի մասնակցային բարելավում՝ ուսուցիչների և աշակերտների արձագանքների ներառման միջոցով:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am